
ԱՌԱՇՆԵՐԻ ԶԻՎԱՆՈՒ ԳՐԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՄՆԵՐԸ

ՊՈՂՈՍՅԱՆ Թ. Գ.

Աշուղական բանաստեղծության ուսումնասիրման սկզբնավորման շրջանից շարունակ ընդգծվել է, որ սիրո երգերից հետո հաջորդ տեղը այս բնույթի ստեղծագործություններում գրավում են խրատները: Հայ աշուղական գրականության գիտակ Գարեգին Լևոնյանը գրում է. «Եթե սերը աշուղի մի թևն է, խրատն ու քարոզը՝ մյուս: Այստեղ է նրա փիլիսոփայությունը, աշխարհայեցողությունը, կյանքից արած եզրակացությունը, խրատն ու դասը»¹:

Խրատական բնույթը Հ. Մահակյանը համարում է աշուղական բանաստեղծությունը ժողովրդական ստեղծագործություններից տարբերակող հիմնական հատկանիշը, և միաժամանակ նույն այդ դիդակտիկ բնույթը աշուղական գրականությունը կապում է միջնադարյան խրատական բանաստեղծության հետ²:

Կարծում ենք՝ աշուղական գրականությունն է մեծապես պայմանավորել Աբովյանի «Վերքի» երկու բնորոշ հատկանիշները՝ խորին զգացմունքայնությունը և ընթերցողին ուղղված խոսքի իրապես բացատրական-դաստիարակիչ բնույթը: Ոչ միայն Աբովյանի, այլև Պռոշյանի ու Աղայանի վրա աշուղական գրականության ունեցած ազդեցության մասին Գ. Լևոնյանը գրում է. «Եվ իսկապես Աբովյանը աշուղի լեզվով ու զգացմունքով գրեց յուր «Վերքը», աշուղի երգեր դրեց վեպի մեջ ու այդ նոր համարձակ քայլով անմահացավ: Նույնն արին Աբովյանից հետո հայտնվող մեր անդրանիկ երկու խոշոր գրագետները՝ Պռոշյան և Աղայան, «Սոս և Վարդիթերի» և «Հարություն և Մանվելի» միջից նույն աշուղական հովն է փչում»³:

Աշուղական գրականությունը ուղղակիորեն կապված է ժողովրդական ստեղծագործությունների հետ, ինչպես նաև ունի խրատաբարոյական ուղղվածություն, ուստի դրանում մեծ տեղ են գրավում առած-ասացվածքները և առակները, որոնք միաժամանակ առավել պատկերավոր, խորն ու արտահայտիչ էին դարձնում աշուղական երգերը:

Առած-ասացվածքների՝ աշուղական գրականությունում և հատկապես Զիվանու գործերում մեծ տեղ գրավելը պայմանավորված էր նաև նրանց գրական արժանիքներով: Առածների մասին Ա. Ղանալանյանը գրում է. «Դա, նախ և առաջ, նրանց զարմանալի հակիրճ ու ներգործուն, պարզ ու ճշմարտացի խոսքն է, քիչ բառերով շատ բան ասելու կարողությունը:

¹ Լևոնյան Գ., Հայ աշուղներ, Ազգագրական հանդես, XI գիրք, Թիֆլիս, 1904, էջ 131:

² Հայ աշուղներ, կազմեց՝ Մահակյան Հ., Ե., 1961, էջ 11:

³ Լևոնյան Գ., նշվ. աշխ., էջ 149:

Ընդունված ճշմարտություն է, որ ամենամեծ իմաստությունը խոսքի պարզության ու հակիրճության մեջ է»⁴:

Ջիվանու՝ առաձներին հաճախադեպ դիմելը պայմանավորված էր նաև ժամանակի ընդհանուր գրական հոսանքով, ժողովրդական ստեղծագործությունները արժևորելու և տեղ տալու ձգտմամբ: XIX դարի երկրորդ կեսին պարբերական մամուլի էջերում և առանձին գրքերով հրատարակվում էին թե՛ առաձներ, և թե՛ կատարվում էր վերջիններիս վերլուծությունը տեսական և գրական արժևորմամբ:

1880 թ. Վիեննայում լույս է տեսնում տեղի Մխիթարյան հայրերից Հ. Միմոն վրդ. Ճուլարտյանի «Առաձք ազգայինք» ժողովածուն, որի առաջաբանում հեղինակը գրում է, թե ով ցանկանում է իմանալ հայության «հոգին՝ բնատրուրիներ և կերպը», թող կարդա առաձներ, որոնցում միտքը հայտնվում է այլաբանորեն: Առաձների մեծ տարածվածությունը հեղինակը բացատրում է նրանով, որ առաձը դիմացինին ուղղված դաստիարակիչ այնպիսի խոսք է, որը, ըստ էության, նրան չի վերաբերում, և լսողը չի վիրավորվում, սակայն կատարում է անհրաժեշտ եզրակացությունը: Ճուլարտյանը բերում է նաև իր այս մտքին համահունչ հետևյալ առաձը. «Ես քեզի կուտամ խրատ, դուն չես առներ վրադ»⁵:

Ժողովրդական տարբեր առաձներ ներկայացնող մեկ այլ գործում, որի կազմողն է Գ. Տիգրանյանը, նախ բերվում են առաձները և ապա այդ առաձների բացատրությունն ու մեկնաբանությունը, որն արդեն որոշակի ընդհանրություն է ստեղծում այն բանաստեղծությունների հետ, որոնցում տարբեր առաձներ են վկայակոչված: Առաձների մեկնաբանությանը որոշակի գեղարվեստականություն է հաղորդում և այն, որ այս բացատրությունները ոչ թե հարազատորեն վերարտադրում են ժողովրդական ասելիքը, այլ ներկայացնում նաև հեղինակի անհատական մոտեցումը: Այսպես, «Գնա՛ մեռիր, արի սիրեն» առաձի մեկնաբանությունում գրում է. «Մարդ քանի կենդանի է, վատ յատկությունները միայն կյիշեն և կստեն. երբ մեռնի, լաւը կասեն ու կգովեն, կցաւին»⁶:

Էլ ավելի ազատ ու անհատական մեկնաբանություն է տրված «Հաւկիթ ածան հաւը՝ կոկոսն կըլայ» առաձին՝ «Գործունեայ մարդը համարձակախօս կլինի»⁷:

Ջիվանին առաձները վկայակոչելիս օգտագործում է թե՛ առաձ բառը և թե՛ դրանք անվանում «Հարանց խոսքեր անգին»⁸:

Առաձները Ջիվանին օգտագործում է բանաստեղծական մեկնաբանությամբ կամ ստեղծագործության սկզբում, որով պայմանավորում է

⁴ Դանալանյան Ա., Առաձանի, Ե., 1960, էջ LXXV:

⁵ Ճուլարտյան Միմոն վրդ., Առաձք ազգայինք, Վիեննա, 1880, էջ 45:

⁶ Տիգրանյան Գ., Առաձք, ասացուածք եւ գրոյցք հայոց Նոր Նախիջևանի, Ռոստով, 1892, էջ 36:

⁷ Նույն տեղում, էջ 44:

⁸ Աշուղ Ջիվանի, Անհայտ երգեր, Ե., 2009, էջ 312:

բանաստեղծական զարգացման ընթացքը, և կամ էլ բերում է վերջին տնում, որում կատարվում է աշուղի խրատ եզրահանգումը: Ուստի վերջին տնում բերված առածները լիովին համընկնում են այդ տան աշուղական բանաստեղծության մեջ ունեցած գործառնություն: Առածները հանդիպում են նաև բանաստեղծությունների մնացյալ տներում, ընդ որում, երբեմն միանգամից մի քանի առածներ:

□Անմիտ մարդ□ գործում, շեշտելով այն միտքը, որ հոգսի մասին մտածելը ցավին դարման չի լինի և չպետք է շարունակ տխրել ու ողբալ, աշուղը գրում է.

**Ջիվանի, պապական մի լավ առած կա,
Անտեղի լացողը անաչք կ'մնա,
Թե կարող ես, ինչ էլ պատահի՝ խնդա,
Լացը պատուհաս է, անմխիթար մարդ⁹:**

Այս տան վերջին երկու տողը թեև մեծապես պայմանավորված է բանաստեղծության նախորդ ողջ ընթացքով, բայց և միաժամանակ մեկնաբանությունն է երկրորդ տողում բերված հիշյալ առածի:

Ջիվանու՝ որպես առած, որպես իմաստուն խոսք բերված արտահայտությունների մեծ մասը առկա է նաև Ա. Ղանալանյանի կազմած «Առածանի» ժողովածուում, իսկ մի որոշ մասը մեզ չհաջողվեց գտնել այնտեղ, թեև դրանք ևս իրենց ժողովրդական շնչով որոշակիորեն կարելի է առած համարել: Այն խոսքերը, օրինակները, որոնք չեն հանդիպում Ղանալանյանի ժողովածուում, ավելի քիչ ժողովրդական շունչ ունեն և ավելի են ձուլված Ջիվանու խոսքին, թեև դրանք ևս բնորոշ են ժողովրդական մտածողությանը: Նման խոսքերը թեև Ջիվանին ինքը անվանում է առած, սակայն դրանք ավելի շատ գրական ծագում ունեն և գալիս են Աստվածաշնչի «Իմաստության գրքից» և մի շարք այլ աղբյուրներից:

«Մեծբերան մարդը» վերնագրված գործի առաջին տնում ասվում է.

**Մի մեծ քար շալակե, դու մեծ մի խոսիր,
Արք ու պատիվ չունի մեծբերան մարդը,
Հայրենական այս առածը լավ լսիր,
Աստիճանից կընկնի մեծբերան մարդը¹⁰:**

«Գիտունն ու տգետը» բանաստեղծությունում, որը կառուցված է նրանց միջև առկա հակադրության վրա, կա միանգամից երկու առած, որոնք նա համապատասխանաբար բերել է առաջին երկու տներում: Առաջինը Ջիվանու շարադրմամբ հնչում է այսպես.

**Գիտունի հետ քար քաշելը հեշտ է խիստ,
Տգետի հետ մեղր ուտելը դժվար է¹¹:**

⁹ Նույն տեղում, էջ 339:

¹⁰ Ջիվանու քնարը, աշխատ. Ա. Սահակյանի, Ե., 1959, էջ 551:

Այս տողերի հիմքում ընկած առածը ժողովրդական լայն տարածում ունի և հանդիպում է ազգագրական տարբեր շրջաններում մի շարք տարբերակներով: Ղանալանյանի մոտ կան հետևյալ տարբերակները՝ «Գիտունի հետ քար քաշի, անգետի հետ փլավ մի ուտի», «Խելոքին հետ քար կրե, խենթին հետ հաց մ'ուտեր», «Խելոքի հետ քար կրե, խնին հետ ստակ (փող) մի՛ բաժնե»¹²: Այս տարբերակներից յուրաքանչյուրն իր հերթին ունի բարբառային մի շարք փոփոխակներ, սակայն Ջիվանու բերած բանաստեղծական օրինակը, որտեղ ավելացված են հեշտ և դժվար բառերը, ինչպես նաև քարի, հացի և ստակի փոխարեն բերված է մեղրը, ոչ մի տեղ չկա: Թե՛ այս և թե՛ մի շարք այլ դեպքերում, որտեղ որևէ առած Ջիվանու մոտ բերված է բնագրային որոշակի տարբերություններով, այդ տարբերությունները կարող են ունենալ երեք բացատրություն: Առաջին՝ այդ տարբերակը վրիպել է Ղանալանյանի աչքից: Երկրորդ՝ այդ տարբերակը թեև որևէ տպագիր հրատարակությունում տեղ չի գտել, որ Ղանալանյանն այն օգտագործեր, սակայն ժողովրդական միջավայրում ասվել է, և Ջիվանին է գրի առել: Երրորդ՝ Ղանալանյանի մոտ առկա տարբերակը կամ տարբերակները Ջիվանին ներկայացրել է գրական բանաստեղծական որոշակի մշակմամբ և փոփոխությամբ:

Վերը բերված բանաստեղծությունում կերպարային հակադրությունը շարունակելով՝ աշուղը հասնում է խոզի և մարգարտի նշանավոր առածին.

**Խոզը ցեխը տեսավ անշուշտ կգնա,
Թեկուզ վիզը հարյուր մարգարիտ շարե՝¹³:**

Ղանալանյանի ժողովածուում այս առածը կա հետևյալ երկու տարբերակով՝ «Խոզի գլուխը խալիչի վրա չի կենալ» և «Խոզի գլուխը սեղանն են դրե, գլորեր աղբն է ընկե»¹⁴: Այստեղ ևս առկա է գրական մշակումը խոզի և մարգարտի մասին աստվածաշնչային ակունքներով:

Մեկ այլ բանաստեղծություն Ջիվանին վերնագրել է հենց «Առածներ»: Այստեղ, սակայն, առածը միայն առաջին տանը կա, իսկ երկրորդ և երրորդ տներում որպես առած Ջիվանին իր խորհրդածություններն է բերում: Առաջին տանն ասվում է.

**Ցավ մի անիլ, աշխատավոր որմնադիր,
Գետինը չի մնալ շինության քարը,
Կ'ճարվի գին դնող, բնավ մի՛ երկիր,
Մատանու ակ կ'լինի պատվական քարը՝¹⁵:**

¹¹ Նույն տեղում, էջ 304:

¹² Ղանալանյան Ա., Առածանի, էջ 11:

¹³ Ջիվանու քնարը, էջ 304:

¹⁴ Ղանալանյան Ա., նշվ. աշխ., էջ 46:

¹⁵ Ջիվանի, Անտիպ, էջ 557:

Ղանալանյանի մոտ կան տաշած քարին վերաբերող առածի հետևյալ տարբերակները՝ «Տաշած քարը գետնին չի մնա», «Տաշած ոռքը (անկյունաքար) պարապ չի մնալ», «Անգին քարը ցեխումն էլ գին ունի», «Ծակ հուլունքը գետնին մնալ չի»¹⁶։ Ուշադիր քննության դեպքում տեսնում ենք, որ բոլոր այս տարբերակներն էլ հարաբերվում են Ջիվանու գրածի առաջին այս տան հետ։ Անկյունաքարը կապվում է որմնադրի հետ, իսկ հուլունքը՝ մատանու քարի հետ։

Ինչպես որ այս առածի հիմքում ընկած է տաշած քարը, այնպես էլ բանաստեղծության երեք տներն ավարտվում են քար բառով։ Երկրորդ տան մեջ՝ «Կարկեհան քարը» և երրորդ տան մեջ՝ «Իշխանաց դամբարան քարը»։ Այն միտքն է հայտնվում, որ աշխարհում անպիտան ոչինչ չկա, և այն, որ մեզ թվում է ոչ պիտանի, միգուցե նրանով պատրաստվում է իշխանների դամբարանի քարը։

Մեկ այլ բանաստեղծություն էլ վերնագրել է «Ժողովրդական խոսքեր», նկատի ունենալով առածները։ Այստեղ ևս իրար հաջորդող մտքերի մեծ մասը կա՛մ նրա խորհրդածություններն են և կա՛մ էլ գրական ակունքներ ունեցող արտահայտություններ։ Առաջին տողում ասվում է.

Անհարազատ ընկերից հավատարիմ շունն է լավ¹⁷։

Ջիվանին գրական մշակման է ենթարկել հավատարիմ շան մասին եղած հետևյալ առածը իր փոփոխակներով՝ «Շունը շինականի պահապան ընկերն է», «Շան տիրասիրությունն ու հավատարմությունը գոված են»¹⁸։ Այստեղ Ջիվանին համապատասխան փոփոխությամբ ցանկացել է հակադրություն ստեղծել անհավատարիմ մարդու և հավատարիմ շան միջև։

Հաջորդող խոսքը, թեև առած չէ, սակայն կյանքից վերցված և տարածված մի արտահայտություն է.

Օժիտավոր տգեղից անօժիտ սիրունն է լավ։

«Փորձված թանը լավ ա, քանց անփորձ մածունը» և նրա տարբերակը եղող «Կե՛ր փորձած թանը, մի՛ ուտի անփորձ մածունը» առածի վրա են հիմնված հետևյալ տողերը.

**Օտարի քաղցրեղենով քո փորը չի կշտանալ,
Ամենօրյա գտնված քո տանդ մածունն է լավ։**

¹⁶ Ղանալանյան Ա., նշվ. աշխ., էջ 127։

¹⁷ Ջիվանու քնարը, էջ 309։

¹⁸ Ղանալանյան Ա., նշվ. աշխ., էջ 291։

Այս առածի գլխավոր իմաստակիր միավորը քանի որ «փորձն» է, հաջորդող եզրափակիչ տան մեջ նրա միջոցով է Ջիվանին կատարում աշուղական ընդհանրացումը.

**Թեթև ցավից ընկճվող, վհատողը հում է դեռ,
Աշխարհի փորձանքներուն դիմացող տոկունն է լավ.
Ջիվան, ինչպես արևը աստղերի թագուհին է,
Այնպես էլ տգետներից փորձված գիտունն է լավ¹⁹:**

Այն գործերին, որոնցում Ջիվանին մի քանի առածներ է բերում, այնպիսի վերնագրեր է դնում, որոնք հուշում են նրա կապը առածների հետ: Առածը, քանի որ համեմատություն և բերված օրինակ է, նման օրինակների վրա կառուցված և չորս առած պարունակող հետևյալ բանաստեղծությունը Ջիվանին վերնագրել է «Համեմատություն»:

Ջիվանին այստեղ իրարահաջորդ ընթացքով բերում է միանգամից չորս առած՝ կառուցված իմաստային-կերպարային հակադրության վրա, որոնք, սակայն, իմաստաբանորեն հաջորդում և լրացնում են միմյանց.

**Քաղցած իշուն մի խուրձ խոտը մարքարտից, գոհարից լավ է,
Նրա համար կես չափ գարին հազար անգին քարից լավ է,
Մարդը մարդուն կ'ճանաչե, էշն ի նչ գիտե նուշը ի նչ է,
Փորձված ծանոթ ընկերը անծանոթ օտարից լավ է:**

**Ոսկի շողակի արժեքը վայրենի հովիվն ի նչ գիտե,
Եզաբարո խուժանի մոտ բանջարը հանջարից լավ է²⁰:**

Ջիվանու բերած առաջին առածը բանաստեղծության առաջին տողն է, իսկ երկրորդ տողը՝ հիշյալ առածի ջիվանիական մեկնաբանությունը: Այս առածի ժողովրդական համարժեքն է «Դշի համար մի բուռ խոտը լավ ա ամեն բանից»²¹:

«Լավ ա ամեն բանից»-ը Ջիվանին գրականացրել և դարձրել է մարգարիտ ու գոհար:

Երկրորդ տողում, որպես մեկնաբանություն այս առածի և նրանում առկա հակադրության, առավել խորացմամբ Ջիվանին արդեն գրում է, թե էշի համար կես չափ գարին հազար անգին քարից լավ է:

Երրորդ տողում «Էշն ինչ գիտե նուշն ինչ է» տարածված առածից առաջ Ջիվանին ավելացրել է «Մարդը մարդուն կ'ճանաչե» խոսքերը: Փորձված ծանոթ ընկերոջը վերաբերող չորրորդ տողը հետավոր աղերսներ ունի «Փորձածը նորից չեն փորձի» և կամ «Փորձածին մի՛ փորձի» առածի հետ:

¹⁹ Նույն տեղում, էջ 310:

²⁰ Աշուղ Ջիվանի, նշվ. աշխ., էջ 568:

²¹ Ղանալանյան Ա., նշվ. աշխ., էջ 176:

Հաջորդ տան վերը բերված երկրորդ տողն արդեն ավելի շուտ ոչ թե իմաստային, այլ հնչյունային ընդհանրություն ունի «Անճարը կերել ա բանջարը» առածի հետ: Այստեղ անճարին փոխարինել է «Գազանաբարո խուժանը», որի համար բանջարը հանճարից լավն է:

Վերը բերված բանաստեղծության առաջին երկու տողերը ոչ միայն նույնիմաստ առածներ են, այլև Եզոպոսից եկող առակներ, որոնք նաև հենց առակային մշակման են ենթարկվել:

«Հատընտիր առակների» 1885 թ. հրատարակությունում «Աքաղաղ և մարգարիտ» մշակման մեջ ասվում է, որ աքաղաղը, մի մարգարիտ գտնելով, այն տանում է ոսկերչի մոտ և փոխում մի հատիկ գարու հետ: Որպես եզրահանգում ասվում է.

**Տգետ մարդիկ ինչ բանե որ համ չառնեն,
Այն անպիտան ու անօգուտ է կրսեն²²:**

Վահան վրդ. Տեր-Մինասյանի մշակման մեջ աքաղաղը, գտնելով մարգարիտը, վրդովված ասում է.

**Թող գրողը քեզ տանի,
Դու մեր փոքրին չես պիտանի:
Միայն մարդիկ թեթևամիտ
Միրեն՝ յարգին մարգարիտ²³:**

Աքաղաղի խոսքերի հետևողությամբ կատարված հեղինակային եզրահանգման մեջ ասվում է.

**Աղքատ մարդու քաղցած փոքրին
Մարգարիտեն թանգ է գարին:**

Ա. Նալբանդյանի «Որձակ և մարգարիտ» մշակման մեջ որձակը գարու մարգարտից արժեքավոր լինելը այսպես է ձևակերպում.

**Թեկուզ և նա տեսք չունենա,
Բայց սովածին սնունդ կուտայ²⁴:**

Բանաստեղծության հեղինակային եզրահանգումն այստեղ արտահայտվել է ոչ թե բանաստեղծության վերջում, այլ սկզբի բնաբանի տողերում.

**Ինչ բան որ հիմարին անդուրեկան է,
Նա բոլորովին արժեք չունի յուր համար:**

²² Փունջք հատընտիր առակաց, Գ. Պոլիս, 1885, գիրք Ա, էջ 22:

²³ Տեր-Մինասյան Վ. վրդ., Անգիր դպրութիւն և առակք, Գ. Պոլիս, 1883, էջ 128-129:

²⁴ Նալբանդյան Ա., Առակներ, Թիֆլիս, 1906, էջ 10:

Արդեն միանգամից հինգ առածներ պարունակող մեկ այլ բանաստեղծություն հեղինակն անվանել է «Մրախտություններ»։ Այս բանաստեղծության առաջին տան մեջ ասվում է.

**Շապիկ չունեցողի մտքից,
Միշտ հինգ գագ կտավ է անցնում,
Քաղցած հավը հեք, թախծալից
Երագում կորեկ է տեսնում²⁵։**

Առաջին երկու տողերի համարժեքը Ղանալանյանի գրքում «Տկլորի մտքից օրը տասնհինգ գագ կտավ է անցկենում» առածն է²⁶։ Ջիվանին այն որոշակիորեն մեղմացրել և գրականացրել է՝ տկլորին շապիկ չունեցող, իսկ տասնհինգ գագը՝ հինգ գագ դարձնելով։

Հաջորդ երկու տողերը հիմնված են «Անոթի հավը երագում կորեկ է տեսնում» առածի վրա²⁷։ Ժողովրդական առածը ավելի զգացմունքային դարձնելու համար այստեղ, որպես միջարկություն, հավի համար ավելացրել է «հեք, թախծալից» խոսքերը։

«Մուկը ուր [յուր] ծակի դուռը առյուծ ա» և «Մուկն յուր պոնի մեջ ասլան կըլի» առածի հետևողությամբ գրում է.

**Մուկը կատու չեղած տեղը
Անվեհեր առյուծ է դառնում։**

Այս տողերին անմիջապես հաջորդում է բանաստեղծության վերջին տունը, որտեղ յուրաքանչյուր երկու տողը մի առածի հետ է կապվում.

**Ջիվան, մինչ երեխան չըլա,
Մայրը չի զարդնի, ծիծ չի տա,
Գայլը ամպ օր կխնդա,
Գողը մութ գիշեր է պտրում։**

Ջիվանին առաջին դեպքում փոքր փոփոխությամբ ավելի է ուժեղացրել «Ընչանք երեխեն լաց չըլի, մերը ծիծ չի տա» և «Չլացած երեխին ծիծ չեն տա» առածի իմաստը։ Մոր կուրծք տալուն Ջիվանին ավելացրել է մոր արթնանալու և նոր կուրծք տալու իմաստը, որով ռուսական հեղափոխության օրերին՝ 1907 թ. գրված բանաստեղծությունում ընդգծվում է պայքարով դիմացինին սթափեցնելու և սեփական իրավունքներին տեր կանգնելու գաղափարը։

Վերջին երկու տողերը փոխկապակցված երկու առածներ են, որոնք Ղանալանյանի գրքում, ի դեպ, անմիջապես հաջորդում են իրար։ Երկուսն էլ կապված են մութ գիշերով կատարվող համաշխարհային հետ։ Գայլերին

²⁵ Աշուղ Ջիվանի, նշվ. աշխ., էջ 475։

²⁶ Ղանալանյան Ա., նշվ. աշխ., էջ 80։

²⁷ Նույն տեղում, էջ 80։

վերաբերող առածում ասվում է. «Գելն ամպ օր կուրախանա» և «Ամբ օրը գիլին հարսանիք ա»²⁸: Գողին վերաբերող առածը Ղանալանյանի մոտ, ինչպես ասացինք, անմիջապես հաջորդում է գայլի առածին՝ «Գողը ինչ ա ուզում-մույթ գիշեր» և «Գողը մույթ գիշերը կխնդա»: Նաև ինչպես որ Ջիվանին այս երկու առածները, մեկ կապակցության մեջ դնելով, մեկ ամբողջության է վերածել, այնպես էլ մի առածում այս երկուսը բերված են միասին. «Գելն ամպ օր կուզի, գողը՝ մույթ գիշեր»²⁹:

Ջիվանին այլևս որևէ մեկնաբանություն չի ավելացնում որպես եզրափակում, քանի որ ժողովրդական առածի տողերն արդեն ամեն ինչ ասում են:

«Առակ» վերնագրով բանաստեղծությունում կան երեք առածներ, և Ջիվանին, առակ ասելով, այստեղ հենց այս առածները նկատի ունի: Նրանցից երկուսով սկսվում է բանաստեղծությունը, իսկ երրորդով՝ եզրափակվում: Առաջին տնում ասվում է.

**Ձին որ ընկած է լինում,
Էշն էլ քացի է խբում,
Եզր որ կապած լինի,
Մորթողներն են շատանում**³⁰:

Երկու դեպքում էլ աղբյուրը «Եզր որ վեր ընկնի, դանակավորը կշատանա» առածն է³¹:

Բառացի մեջբերելով «Մինչև հաստը բարակի, բարակի հոգին դուս կգա» առածը, վերջինիս ազգային-հոգևոր նոր իմաստ է հաղորդում.

**Լավ նայիր հայի վրա,
Հաստատ կա ու կմնա,
Մինչև հաստը բարկընա,
Բարկի հոգին դուրս կուգա:**

«Հաստատ կա»-ն դարձնելով «Հաստը բարկընա» և Կովկասում հայերի դեմ ծավալված հայաժանքները նկատի ունենալով՝ ցանկացել է ասել, որ մինչև հային փորձեն բարակացնել՝ խեղճացնել, այդպես փորձողների հոգին դուրս կգա:

Առածներին տրված ուրույն մի բնորոշում է «Երգ» վերնագրով բանաստեղծության ենթավերնագիրը՝ «Համայնքի մեջ գործածված խոսքեր»³²: Այս բանաստեղծության իմաստն այն է, որ նեղության մեջ մարդը չի կարող ուրախ լինել, և ուշքն ու միտքը իր հոգսերն են: Երրորդ տան մեջ ասվում է.

²⁸ Նույն տեղում, էջ 236:

²⁹ Նույն տեղում:

³⁰ Մշուղ Ջիվանի, նշվ. աշխ., էջ 423:

³¹ Ղանալանյան Ա., նշվ. աշխ., էջ 238:

³² Մշուղ Ջիվանի, նշվ. աշխ., էջ 242:

*Կարոտյալը թախծալից,
Ախ է անում խոր սրտից,
Քաղցած արքրի մտքից,
Խաշած կորեկ է անցում:*

Այստեղ ևս օգտագործված է սոված հավի արդեն վերը բերված առածը:

Անվտիպելով կարող ենք ասել, որ առածները համահունչ են աշուղական բանաստեղծության խրատական ոգուն, և Ջիվանին, վարպետորեն օգտագործելով այս հանգամանքը, համապատասխան գրական մշակմամբ և վերախմաստավորմամբ դրանք միահյուսել է իր ստեղծագործություններին՝ նպաստելով դրանց առավել տարածմանը և ժողովրդականացմանը:

ЛИТЕРАТУРНЫЕ ОБРАБОТКИ ПОСЛОВИЦ АШУГОМ ДЖИВАНИ

ПОГОСЯН Т. Г.

Резюме

Певцы-ашуги часто обращались к литературной обработке народных пословиц и басен.

Пословицы созвучны дидактике ашугской поэзии, и ашуг Дживани, подвергая половицы литературной обработке, а порой переосмысляя, использовал их в своем творчестве, тем самым способствуя популяризации басен и пословиц.

THE LITERARY ADAPTATIONS OF PROVERBS BY GUSAN JIVANI

T. POGOSYAN

Abstract

Bards have often addressed literary adaptations of national proverbs and fables.

The proverbs are harmonious with the didactics of bard poetry, and Gusani Jivani used and sometimes revisited proverb adaptations in his work, thus contributing to their popularization.